ԳԱՆԱՏԱՀԱՅՈՑ ԹԵՄ DIOCÈSE ARMÉNIEN DU CANADA

ԿԱՆԹԵՂ

ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ

GANTEGH BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MOTRÉAL

ՍՐԲԵՆ ԼՈՒՍԱՒՈՐՉ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

ԿԻՐԱԿԻ, 22 Նոյեմբեր 2020 — *190* — *DIMANCHE, 22 Novembre 2020*

Ա. Կիրակի Յիսնակի

1er Dimanche de l'Avent

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
Website: www.saintgregory.ca / E.mail: saintgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Աստուածաշունչի Ընթերցումներ

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԼԻ ԿՈՂՄԷ
ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՆԵՐՈՒՆ
ԳՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ (1.1-10)

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ (12.13-31)

Les lectures de la Bible d'aujourd'hui

1 THESSALONICIENS: 1.1-10
LUC: 12.13-31

Պատարագիչ եւ քարոզիչ՝
ԱՐԺ. Տ. ԴԱՒԻԹ ՔՀՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ
Հոգեւոր Հովիւ

Célébration et l'Homélie
RÉV. PÈRE DAVID MARGARYAN
Prêtre Paroissial

Առաւօտեան Ժամերգութիւն -	9:30-ին
Office Matines à	9h30
Ս. Պատարագ- ուղիղ սփռում -	10:30-ին
La Sainte Messe – En direct à	10h30
Հոգեհանգստեան յատուկ պաշտօն - ուղիղ սփռում- ժամը	12:00-ին
Spécial Office Réquiem - En direct à	12h00

DIACRES – ACOLYTES

Organiste: Mme Houry Bedrossian

Chœur "Gomidas"

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Les lectures de dimanche

The Sunday Readings

1 ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՆԵՐ 1.1-10

1Պօղոս, Սիղուանոս եւ Տիմոթէոս, Թեսաղոնիկեցիներու եկեղեցիին՝ Հայր Աստուծմով ու Տէր Յիսուս Քրիստոսով.
2Շնորհք եւ խաղաղութիւն ձեզի Աստուծմէ՝ մեր Հօրմէն, ու Տէր Յիսուս Քրիստոսէ: Ամէն ատեն շնորհակալ կ՚ըլլանք Աստուծմէ՝ ձեր բոլորին համար, յիշելով ձեզ մեր աղօթքներուն մէջ, 3անդադար յիշելով ձեր հաւատքին գործը, սիրոյ աշխատանքը, եւ մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի յոյսին համբերութիւնը՝ Աստուծոյ ու մեր Հօր առջեւ, 4գիտնալով՝ սիրելի եղբայրներ՝ թէ Աստուած ընտրեց ձեզ: 5Որովհետեւ մեր աւետարանը քարոզուեցաւ ձեզի ո՛չ միայն խօսքով, այլ նաեւ զօրութեամբ, Սուրբ Հոգիով ու լման վստահութեամբ: Դո՛ւք ալ գիտէք թէ ի՛նչպէս կեցանք ձեր մէջ՝ ձեզի համար, 6եւ դուք նմանեցաք մեզի ու Տէրոջ, ընդունելով խօսքը շատ տառապանքի մէջ՝ Սուրբ Հոգիին ուրախութեամբ: 7Հետեւաբար դուք տիպար եղաք բոլոր հաւատացեալներուն՝ որ Մակեդոնիայի եւ Աքայիայի մէջ են, 8որովհետեւ ո՛չ միայն Մակեդոնիայի եւ Աքայիայի մէջ հռչակուեցաւ Տէրոջ խօսքը ձեզմէ, այլ նաեւ ամէն տեղ տարածուեցաւ Աստուծոյ վրայ ձեր ունեցած հաւատքը, այնպէս որ պէտք չունինք որեւէ բան խօսելու. 9քանի որ իրենք իրենցմէ կը պատմեն մեր մասին, թէ ինչպիսի՛ մուտք ունեցանք ձեր մէջ, եւ ի՛նչպէս դուք կուռքերէն դարձաք Աստուծոյ՝ ապրող ու ճշմարիտ Աստուծոյ ծառայելու համար, 10եւ երկինքէն սպասելու անոր Որդիին՝ որ ինք մեռելներէն յարուցանեց, այսինքն Յիսուսի, որ կ՚ազատէ մեզ գալիք բարկութենէն:

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 12.13-31

13Բազմութեան մէջէն մէկը ըսաւ անոր. «Վարդապե՛տ, ըսէ՛ եղբօրս՝ որ ինծի հետ բաժնէ մեզի ինկած ժառանգութիւնը»: 14Ան ալ ըսաւ անոր. «Մա՛րդ, ո՞վ նշանակեց զիս իրաւարար կամ բաժնող՝ ձեր վրայ»: 15Ապա ըսաւ անոնց. «Ուշադի՛ր եղէք եւ զգուշացէ՛ք ագահութենէ. որովհետեւ մէկուն ստացուածքներուն առատութ-ենէն կախուած չէ իր կեանքը»: 16Առակ մըն ալ խօսեցաւ անոնց՝ ըսելով. «Հարուստ մարդու մը արտերը տուին առատ բերքեր, 17եւ ան կը մտածէր ինքնիրեն՝ ըսելով. “Ի՞նչ ընեմ, որովհետեւ տեղ չունիմ՝ ուր բերքերս ժողվեմ”: Եւ ըսաւ. 18“Սա՛ պիտի ընեմ. պիտի քանդեմ ամբարներս, պիտի կառուցանեմ աւելի՛ մեծերը, հոն պիտի ժողվեմ իմ բոլոր բերքերս ու բարիքներս, 19եւ պիտի ըսեմ անձիս. «Ո՛վ իմ անձս, շատ բարիքներ ունիս՝ դիզուած շատ տարիներու համար. հանգչէ՛, կե՛ր, խմէ՛ եւ զուարճացի՛ր»”: 20Բայց Աստուած ըսաւ անոր. “Անմի՛տ, այս գիշեր անձդ պիտի պահանջուի քեզմէ. ուստի որո՞ւ պիտի

ըլլան այդ պատրաստած բաներդ”: 21Այսպէս է ան՝ որ գանձ կը դիզէ ինքնիրեն համար, բայց չի հարստանար Աստուծոյ մօտ»:
22Եւ ըսաւ իր աշակերտներուն. «Ուստի կը յայտարարեմ ձեզի. “Մի՛ մտահոգուիք ձեր անձին համար՝ թէ ի՞նչ պիտի ուտէք, ո՛չ ալ մարմինին համար՝ թէ ի՞նչ պիտի հագնիք. 23որովհետեւ անձը կերակուրէն աւելի է, ու մարմինը՝ հագուստէն: 24Դիտեցէ՛ք ագռաւները, որոնք ո՛չ կը սերմանեն եւ ո՛չ կը հնձեն, որոնք ո՛չ շտեմարաններ ունին, ո՛չ ալ ամբարներ, բայց Աստուած կը կերակրէ զանոնք. դուք ո՞րչափ աւելի կ’արժէք թռչուններէն: 25Ձեզմէ ո՞վ կրնայ մտահոգուելով կանգո՛ւն մը աւելցնել հասակին վրայ: 26Հապա եթէ չէք կրնար ամենափոքր բանը փոխել, ինչո՞ւ կը մտահոգուիք ուրիշ բաներու համար: 27Դիտեցէ՛ք շուշանները, թէ ի՞նչպէս կ’աճին: Ո՛չ կ’աշխատին եւ ո՛չ կը մանեն. բայց կը յայտարարեմ ձեզի թէ Սողոմոն ալ՝ իր ամբողջ փառաւորութեան մէջ՝ չհագուեցաւ անոնցմէ մէկուն պէս: 28Ուստի եթէ խոտը, որ այսօր դաշտի մէջ է ու վաղը փուռը պիտի նետուի, Աստուած ա՛յդպէս կը հագուեցնէ, ո՞րչափ աւելի ձե՛զ, թերահաւատնե՛ր: 29Ա՛լ դուք մի՛ փնտռէք թէ ի՞նչ պիտի ուտէք եւ ի՞նչ պիտի խմէք, ու մի՛ շփոթիք. 30որովհետեւ աշխարհի ազգե՛րը կը փնտռեն այդ բոլոր բաները, եւ ձեր Հայրը գիտէ թէ ասոնք պէտք են ձեզի: 31Հապա դուք խնդրեցէ՛ք Աստուծոյ թագաւորութիւնը, ու այդ բոլոր բաներն ալ պիտի տրուին ձեզի”»:

1 Thessaloniciens 1.1-10

1Paul, et Silvain, et Timothée, à l'Eglise des Thessaloniciens [qui est] en Dieu le Père, et en [notre] Seigneur Jésus-Christ : que la grâce et la paix vous soient données par Dieu notre Père, et par le Seigneur Jésus-Christ. 2Nous rendons toujours grâces à Dieu pour vous tous, faisant mention de vous dans nos prières. 3Et nous remettant sans cesse en mémoire l'œuvre de votre foi; le travail de votre charité, et la patience de [votre] espérance, [que vous avez] en notre Seigneur Jésus-Christ, devant notre Dieu et Père; 4Sachant, mes frères bien-aimés de Dieu, votre élection. 5Car la prédication que nous avons faite de l'Evangile au milieu de vous, n'a pas été en parole seulement, mais aussi en vertu, et en Saint-Esprit, et en preuves convaincantes, ainsi que vous savez quels nous avons été parmi vous pour l'amour de vous. 6Aussi avez-vous été nos imitateurs, et du Seigneur, ayant reçu avec la joie du Saint-Esprit la parole, accompagnée de grande affliction; 7Tellement que vous avez été pour modèle à tous les fidèles de la Macédoine, et de l'Achaïe. 8Car la parole du Seigneur a retenti de chez vous, non-seulement dans la Macédoine et dans l'Achaïe, mais aussi en tous lieux; et votre foi envers Dieu est si célèbre, qu'il ne nous est pas besoin d'en rien dire. 9Car eux-mêmes racontent de nous quel accès nous avons eu auprès de vous, et comment vous avez été convertis des idoles à Dieu, pour servir le Dieu

vivant et vrai; 10Et pour attendre des Cieux son Fils Jésus, qu'il a ressuscité des morts, et qui nous délivre de la colère à venir.

Luc 12.13-31

13Et quelqu'un de la troupe lui dit : Maître, dis à mon frère qu'il partage avec moi l'héritage. 14Mais il lui répondit : ô homme! qui est-ce qui m'a établi sur vous pour être votre juge, et pour faire vos partages? 15Puis il leur dit : voyez, et gardez-vous d'avarice; car encore que les biens abondent à quelqu'un, il n'a pourtant pas la vie par ses biens. 16Et il leur dit cette parabole : Les champs d'un homme riche avaient rapporté en abondance; 17Et il pensait en lui-même, disant : que ferai-je, car je n'ai point où je puisse assembler mes fruits? 18Puis il dit : voici ce que je ferai : j'abattrai mes greniers, et j'en bâtirai de plus grands, et j'y assemblerai tous mes revenus et mes biens; 19Puis je dirai à mon âme : mon âme, tu as beaucoup de biens assemblés pour beaucoup d'années, repose-toi, mange, bois, et fais grande chère. 20Mais Dieu lui dit : insensé, en cette même nuit ton âme te sera redemandée; et les choses que tu as préparées, à qui seront-elles? 21Il en est ainsi de celui qui fait de grands amas de biens pour soi-même, et qui n'est pas riche en Dieu. 22Alors il dit à ses Disciples : à cause de cela je vous dis, ne soyez point en souci pour votre vie, de ce que vous mangerez; ni pour votre corps, de quoi vous serez vêtus. 23La vie est plus que la nourriture, et le corps est plus que le vêtement. 24Considérez les corbeaux, ils ne sèment, ni ne moissonnent, et ils n'ont point de cellier, ni de grenier, et cependant Dieu les nourrit; combien valez-vous mieux que les oiseaux? 25Et qui est celui de vous qui par son souci puisse ajouter une coudée à sa stature? 26Si donc vous ne pouvez pas même ce qui est très-petit, pourquoi êtes-vous en souci du reste? 27Considérez comment croissent les lis, ils ne travaillent, ni ne filent, et cependant je vous dis que Salomon même dans toute sa gloire n'était point vêtu comme l'un d'eux. 28Que si Dieu revêt ainsi l'herbe qui est aujourd'hui au champ, et qui demain est mise au four, combien plus vous [vêtira-t-il], ô gens de petite foi? 29Ne dites donc point : que mangerons-nous, ou que boirons-nous? et ne soyez point en suspens. 30Car les gens de ce monde sont après à rechercher toutes ces choses; mais votre Père sait que vous avez besoin de ces choses. 31Mais plutôt cherchez le Royaume de Dieu, et toutes ces choses vous seront données par-dessus.

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ

SERVICE POUR LE REPOS DE L'ÂME

SERVICE FOR THE REPOSE OF SOUL

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

ԿԻՐԱԿԻ, 22 ՆՈՅԵՄԲԵՐ 2020

ՅԻՇԱՏԱԿԻ ՕՐ

ԱՐՑԱԽԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

ՅԱՆՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԱՄԱՐ

ՆԱՀԱՏԱԿՈՒԱԾ ՀԵՐՈՍՆԵՐՈՒ

Առաջնորդ սրբազան հօր թելադրանքով եւ նախաձեռնութեամբ Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւին եւ Ծխական Խորհուրդին հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի յանուն Հայրենիքի ազատութեան տեղի ունեցող Արցախի ճակատամարտին մեր քաջարի զինծառայող հերոսներու յաւէտ յիշատակին:

Նորոգ հանգուցեալներ՝

Հովհաննիսյան Հովհաննես Մարզպետի, ծնվ. 2001թ.
Մանուկյան Միքայել Էդուարդի, ծնվ. 2001թ.
Պահեստազորային Գրիգորյան Պարույր Ավետիքի, ծնվ. 1984թ.
Ղուկասյան Միեր Աշխարհաբեկի, ծնվ. 2000թ.
Հովակիմյան Վահե Սեյրանի, ծնվ. 2001թ.
Մուսայելյան Վարդան Սամվելի, ծնվ. 2002թ.
Հարությունյան Հարություն Արմենի, ծնվ. 2001թ.
Առաքելյան Արեն Մարատի, ծնվ. 2000թ.
Սելիմյան Արգամ Առաքելի, ծնվ. 2001թ.
Սարգսյան Գարեգին Արմենի, ծնվ. 1996թ.
Ստեփանյան Տարոն Արսենի, ծնվ. 1992թ.
Հովհաննիսյան Եղիշ Մաքսիմի, ծնվ. 1989թ.
Կամավորական Մանուկյան Արարատ Ռազմիկի, ծնվ. 1971թ.
Կամավորական Ղալայան Արտաշ Ժորայի, ծնվ. 1978թ.
Կամավորական Ապրեսյան Արսեն Վլադիմիրի, ծնվ. 1978թ.
Սարգսյան Մաքսիմ Վիլենի, ծնվ. 1990թ.
Պետրոսյան Խաչիկ Հրաչիկի, ծնվ. 1987թ.
Բեգլարյան Ալեն Եղիշի, ծնվ. 2000թ.
Պահեստազորային Բաղդասարյան Արմեն Ռոբերտի, ծնվ. 1997թ.
Սարգսյան Արսեն Արտյոմի, ծնվ. 2001թ.
Հակոբյան Հենրիկ Գուրգենի, ծնվ. 2002թ.

Մխեյան Վահագ Մարտիկի, ծնվ. 2001թ.
Բաղդասարյան Դավիթ Արմենի, ծնվ. 1996թ.
Ինջիղուլյան Գյորգ Հովհաննեսի, ծնվ. 1993թ.
Գյորգյան Ալբերտ Վահագի, ծնվ. 1986թ.
Պապիկյան Վահագն Ժորայի, ծնվ. 1969թ.
Պահեստազորային Ավետիսյան Արթուր Մնացականի, ծնվ. 1972թ.
Կամավորական Մարտիրոսյան Ռուբեն Ռազմիկի, ծնվ. 1972թ.
Կամավորական Զոհրաբյան Արմեն Վալտերի, ծնվ. 1972թ.
Պահեստազորային Թումասյան Վահագ Արամի, ծնվ. 1981թ.
Պահեստազորային Ալիշյան Հովհաննես Արմենակի, ծնվ. 1998թ.
Պահեստազորային Խալաթյան Արթուր Արշակի, ծնվ. 1988թ.
Պահեստազորային Հովակիմյան Արա Ռուբիկի, ծնվ. 1998թ.
Պահեստազորային Խաչատրյան Հարություն Ռոբերտի, ծնվ. 1997թ.
Կարապետյան Հայկ Ռադիկի, ծնվ. 1977թ.
Գրիգորյան Նարեկ Արայիկի, ծնվ. 1992թ.
Մանուկյան Գագիկ Սարգսի, ծնվ. 1994թ.
Մկրտչյան Արտյոմ Ալեքսանդրի, ծնվ. 2000թ.
Ասիրյան Արկադի Վահանի, ծնվ. 2001թ.
Ունուսյան Համլետ Գարիկի, ծնվ. 2000թ.
Եղոյան Սամվել Վարուժանի, ծնվ. 2002թ.
Մելոյան Վանուշ Խաչիկի, ծնվ. 2000թ.
Դադամյան Ռազմիկ Սերգեյի, ծնվ. 1996թ.
Կամավորական Աղաջանյան Էրիկ Բաշիրի, ծնվ. 1984թ.
Կամավորական Վարդազարյան Արծրունիկ Վարդազարի, ծնվ. 1958թ.
Կամավորական Ստեփանյան Սերյոժա Նիկողոսի, ծնվ. 1983թ.
Կամավորական Սաղաթելյան Սյակ Մուշեղի, ծնվ. 1977թ.
Կամավորական Համբարձումյան Արթուր Սամվելի, ծնվ. 1978թ.
Կամավորական Արմաղանյան Ալեքսանդր Աշոտի, ծնվ. 1967թ.
Կամավորական Մաթյոսյան Դավիթ Դյոնդի, ծնվ. 1960թ.
Կամավորական Բալյան Արամ Կամոյի, ծնվ. 1992թ.
Դավոյան Գարիկ Գառնիկի, ծնվ. 2000թ.
Բալյան Ժիրայր Լյոնի, ծնվ. 1986թ.
Հովհաննիսյան Արթուր Արայիկի, ծնվ. 2001թ.
Կամավորական Գրիգորյան Վաղարշակ Արմենի, ծնվ. 1984թ.
Սուքիասյան Արման Արտակի, ծնվ. 2001թ.
Իսոյան Վազգեն Կարենի, ծնվ. 2000թ.
Թոմբուլյան Սարգիս Հակոբի, ծնվ. 2000թ.
Գասպարյան Արթուր Գարիկի, ծնվ. 1987թ.
Սեդրակյան Ռաշիդ Արայի, ծնվ. 2001թ.
Կամավորական Ղահրամանյան Արթուր Արկադիի, ծնվ. 1985թ.
Կամավորական Պողոսյան Վրեժ Անդրանիկի, ծնվ. 1992թ.
Սուլեյմանյան Բորիկ Տիտալի, ծնվ. 2002թ.

Բաղդասարյան Նարեկ Արտյոմի, ծնվ. 2002թ.
Կամավորական Երնջակյան Հրաչյա Գագիկի, ծնվ. 1977թ.
Ղազարյան Արսեն Արմենի, ծնվ. 2001թ.
Դանոյան Սարգիս Արամի, ծնվ. 2001թ.
Կամավորական Գաբրիելյան Նիկոլայ Սլավիկի, ծնվ. 1975թ.
Աբրահամյան Ռոբերտ Սարգիսի, ծնվ. 2000թ.
Ղանդիլյան Գառնիկ Կարապետի, ծնվ. 2001թ.
Հովհաննիսյան Մարգար Վահանի, ծնվ. 2001թ.
Պետրոսյան Երանոս Ռուզվելտի, ծնվ. 2002թ.
Նազարյան Ալբերտ Էդուարդի, ծնվ. 2001թ.
Ղուկասյան Գագիկ Վաչիկի, ծնվ. 2000թ.
Հակոբյան Գոռ Հայկասարի, ծնվ. 1992թ.
Ջուլհակյան Վոլոդյա Գրիշայի, ծնվ. 1989թ.
Պահեստազորային Տիգրանյան Արայիկ Բաբկենի, ծնվ. 1998թ.
Պահեստազորային Ներսիսյան Գարիկ Սեյրանի, ծնվ. 1978թ.
Պահեստազորային Սոֆյան Կարեն Արմենակի, ծնվ. 1996թ.
Պահեստազորային Ալեքսանյան Արայիկ Լյովայի, ծնվ. 1978թ.
Գրիգորյան Էռնեստ Վիլենի, ծնվ. 1974թ.
Պահեստազորային Հակոբյան Գառնիկ Գագիկի, ծնվ. 1994թ.
Պահեստազորային Ամիրջանյան Սասուն Շուրայի, ծնվ. 1988թ.
Պահեստազորային Գյորգյան Էդգար Հրաչիկի, ծնվ. 1985թ.
Պահեստազորային Ղարիբյան Բաղդասար Արմենի, ծնվ. 1997թ.
Պահեստազորային Ալեքսանյան Արսեն Արտակի, ծնվ. 1996թ.
Պահեստազորային Սեմերջյան Հարություն Արմենի, ծնվ. 1997թ.
Պահեստազորային Խաչատրյան Էդգար Գյորգի, ծնվ. 1986թ.
Պահեստազորային Նալբանդյան Վրեժ Հովսեփի, ծնվ. 1978թ.
Պահեստազորային Հարությունյան Հրայր Ռուբենի, ծնվ. 1997թ.
Պահեստազորային Գրիգորյան Նարեկ Պողոսի, ծնվ. 1991թ.
Պահեստազորային Մխիթարյան Գյորգ Վահանի, ծնվ. 1994թ.
Պահեստազորային Հարությունյան Լյուդվիգ Արմենի, ծնվ. 1998թ.
Պայմանագրային Մելքումյան Դավիթ Ռոմանի, ծնվ. 1992թ.
Կամավորական Հակոբյան Նարեկ Ստյոպայի, ծնվ. 1991թ.
Պահեստազորային Ղարայան Գարեգին Էդուարդի, ծնվ. 1972թ.
Մուրադյան Գրիգոր Արշավիրի, ծնվ. 2002թ.
Վարդանյան Վարդան Վոլոդյայի, ծնվ. 1962թ.
Խաչատրյան Ջիվան Կարենի, ծնվ. 1992թ.
Ասրյան Արման Միհերի, ծնվ. 1995թ.
Պետրոսյան Մխիթար Արթուրի, ծնվ. 1993թ.
Պահեստազորային Հայրապետյան Սամվել Ռազմիկի, ծնվ. 1984թ.
Առաքելյան Արտյոմ Տիգրանի, ծնվ. 1997թ.
Կամավորական Սարուխանյան Դավիթ Սարոյի, ծնվ. 1996թ.
Չոլակյան Էդգար Սուրենի, ծնվ. 1999թ.
Ստեփանյան Արմեն Արթուրի, ծնվ. 1997թ.
Խաչատրյան Հարություն Արմենի, ծնվ. 1993թ.

Հայրիյան Արամ Համլետի, ծնվ. 1978թ.
Սարգսյան Գարուշ Սարգսի, ծնվ. 2000թ.
Կամավորական Մովսիսյան Ներսես Պետրոսի, ծնվ. 1990թ.
Ղուկասյան Սերյոժա Մամիկոնի, ծնվ. 1996թ.
Ավդիշոյ Իվան Վլադիմիրի, ծնվ. 2001թ.
Ալեքսանյան Անուշավան Սոսիկի, ծնվ. 1969թ.
Հովհաննիսյան Նարեկ Հովսեփի, ծնվ. 2001թ.
Մանուկյան Ռադիկ Գագիկի, ծնվ. 2000թ.
Պահեստազորային Առուստամյան Մխիթար Միրզոյի, ծնվ. 1977թ.
Սարկավագ Պետրոսյան Նարեկ Արկադիի, ծնվ. 1988թ.
Մազմանյան Արթուր Նորայրի, ծնվ. 2000թ.
Շմավոնյան Արզուման Շմավոնի, ծնվ. 2000թ.
Մկրտչյան Հայկազ Ջավենի, ծնվ. 2000թ.
Զոհրաբյան Արտակ Զարզանդի, ծնվ. 2001թ.
Ֆիդանյան Միեր Մինասի, ծնվ. 1985թ.
Ճուղուրյան Նորայր Ալեքսանի, ծնվ. 2001թ.
Սահակյան Ձոն Անդրանիկի, ծնվ. 2000թ.
Գրիգորյան Վարդան Վանիկի, ծնվ. 2002թ.
Պահեստազորային Սարգսյան Գագիկ Առաքելի, ծնվ. 1953թ.
Պահեստազորային Ներկարարյան Հովհաննես Հովհաննեսի, ծնվ. 1972թ.
Գյորգյան Վազգեն Ալեքսանդրի, ծնվ. 1990թ.
Պահեստազորային Ծատուրյան Փայլակ Սեդրակի, ծնվ. 1957թ.
Կամավորական Մարտիրոսյան Արտավազդ Սամվելի, ծնվ. 1993թ.
Կամավորական Գիվարկիզյան Տարոն Արթուրի, ծնվ. 1996թ.
Պահեստազորային Կոտինյան Գրիգոր Արարատի, ծնվ. 1964թ.
Կամավորական Կիրակոսյան Դերենիկ Վարդանի, ծնվ. 1997թ.
Խալաթյան Ադամ Լյոնի, ծնվ. 1993թ.
Կամավորական Ավագյան Գոռ Գարիկի, ծնվ. 1995թ.
Կամավորական Բաղդասարյան Հակոբ Վարդգեսի, ծնվ. 1977թ.
Վարդանյան Սեդրակ Նորիկի, ծնվ. 1990թ.
Մաջարյան Ազատ Մելքոնի, ծնվ. 2000թ.
Գրիգորյան Կամո Կամոյի, ծնվ. 1994թ.
Աննիկյան Հայկ Տիգրանի, ծնվ. 2001թ.
Կամավորական Գյորգյան Հայկազ Աշոտի, ծնվ. 1959թ.
Կամավորական Տոնոյան Գերասիմ Մամիկոնի, ծնվ. 1959թ.
Կամավորական Ֆարմանյան Գագիկ Գրիշայի, ծնվ. 1975թ.
Կարապետյան Գյորգ Գեղամի, ծնվ. 1999թ.
Պահեստազորային Գյորգյան Անդրանիկ Հենրիկի, ծնվ. 1961թ.
Հովհաննիսյան Գառնիկ Ալեքսանի, ծնվ. 2001թ.
Եսայան Ջավեն Հովհաննեսի, ծնվ. 2000թ.
Սառիկյան Սարգիս Ավետիքի, ծնվ. 2001թ.
Խաչատրյան Ալբերտ Աշոտի, ծնվ. 2001թ.
Կամավորական Դավթյան Դավիթ Վիլենի, ծնվ. 1978թ.

Պահեստազորային Կիրակոսյան Դավիթ Հրահատի, ծնվ. 1989թ.
Պողոսյան Վարդգես Վասիլի, ծնվ. 1998թ.
Առաքելյան Սյակ Վլադիկի, ծնվ. 1993թ.
Լալայան Ռոմա Վալերիի, ծնվ. 1984թ.
Աբրահամյան Էրիկ Արմենի, ծնվ. 1994թ.
Տեր-Ավետիսյան Դավիթ Հայկի, ծնվ. 2000թ.
Պահեստազորային Հակոբյան Արմեն Անուշավանի, ծնվ. 1967թ.
Կամավորական Ավանեսյան Վլադիմիր Սամսոնի, ծնվ. 1994թ.
Արտեմյան Նորայր Ռոբերտի, ծնվ. 2001թ.
Հակոբյան Արտաշես Գյորգի, ծնվ. 2000թ.
Պահեստազորային Մաթյոսյան Աշոտ Կոստյայի, ծնվ. 1978թ.
Եղիազարյան Հրանտ Արթուրի, ծնվ. 2000թ.
Ավագյան Տիգրան Աշոտի, ծնվ. 1996թ.
Կամավորական Գեղամյան Ռաֆայել Աշոտի, ծնվ. 1992թ.
Պահեստազորային Ղարիբյան Մկրտիչ Գրիգորի, ծնվ. 1992թ.
Արյիկյան Գարիկ Էդիկի, ծնվ. 1997թ.
Ղազարյան Գոռ Մելիքի, ծնվ. 2000թ.
Պահեստազորային Առուստամյան Վարուժան Սերգեյի, ծնվ. 1962թ.
Սիմոնյան Ալեքսան Ռազմիկի, ծնվ. 1997թ.
Ունջուղուլյան Հակոբ Այվազի, ծնվ. 2002թ.
Մնացականյան Սամվել Լյոնի, ծնվ. 2001թ.
Մելքոնյան Հարություն Վաչագանի, ծնվ. 2001թ.
Գալստյան Հովհաննես Արմենի, ծնվ. 2000թ.
Պահեստազորային Գագրեյան Գոռ Ստեփանի, ծնվ. 1998թ.
Միերյան Էդգար Արմենի, ծնվ. 2002թ.
Պահեստազորային Տոնոյան Արամ Աշոտի, ծնվ. 1990թ.
Պահեստազորային Ղազարյան Մինաս Մովսեսի, ծնվ. 1963թ.
Կամավորական Արդինյան Բագրատ Ժորայի, ծնվ. 1989թ.
Կամավորական Մարտիրոսյան Արսեն Գարեգինի, ծնվ. 1996թ.
Պահեստազորային Սարգսյան Հայկ Աշոտի, ծնվ. 1981թ.
Կամավորական Պետոյան Արմեն Պետրոսի, ծնվ. 1969թ.
Կամավորական Սահակյան Վարդան Իսկանդերի, ծնվ. 1972թ.
Օգանիսյան Սամվել Սուրենի, ծնվ. 1985թ.
Դանիելյան Միքայել Խաչիկի, ծնվ. 2001թ.
Ամարյան Օթար Քյալաշի, ծնվ. 1998թ.
Քոչարյան Էդուարդ Նվերի, ծնվ. 2000թ.
Խաչատրյան Դավիթ Արմենի, ծնվ. 2001թ.
Ներսիսյան Ռոլանդ Վրեժի, ծնվ. 1984թ.
Պահեստազորային Հովհաննիսյան Աշոտ Դավիթի, ծնվ. 1994թ.
Մակարյան Գագիկ Հայկի, ծնվ. 1996թ.
Խաչատրյան Մելիք Սարգսի, ծնվ. 1984թ.
Կուլիջանյան Գյորգ Սամվելի, ծնվ. 2002թ.
Պահեստազորային Աբրահամյան Վազգեն Վագիֆի, ծնվ. 1998թ.
Մուրադյան Սուրեն Վոլոդյայի, ծնվ. 1961թ.

Սերոբյան Մալխաս Ռուբիկի, ծնվ. 1973թ.
Գասպարյան Գյորգ Կորյունի, ծնվ. 1989թ.
Սիրունյան Վահե Միշայի, ծնվ. 1982թ.
Ղազախեցյան Նվեր Տիգրանի, ծնվ. 1996թ.
Ենիկալոպյան Կառլեն Կամոյի, ծնվ. 1991թ.
Սլոյան Սամադ Մամդի, ծնվ. 2001թ.
Մանուկյան Իշխան Արայի, ծնվ. 2002թ.
Բախշյան Ալբերտ Արմենի, ծնվ. 2001թ.
Հաջաթյան Խորեն Արամի, ծնվ. 2001թ.
Ավանեսյան Սամվել Վլադիկի, ծնվ. 1994թ.
Վարդանյան Կամո Բագրատի, ծնվ. 1990թ.
Պողոսյան Մխիթար Ռոմիկի, ծնվ. 1985թ.
Բաղասյան Արմեն Ալեքսանդրի, ծնվ. 1989թ.
Վերդյան Արեն Լորիկի, ծնվ. 1984թ.
Մուրադյան Ժորա Արմենի, ծնվ. 2001թ.
Հովհաննիսյան Նարեկ Կարենի, ծնվ. 2001թ.
Գրիգորյան Արսեն Կարենի, ծնվ. 2001թ.
Ավդալյան Գեղամ Էդվարդի, ծնվ. 2000թ.
Հարությունյան Լյովա Մամիկոնի, ծնվ. 2001թ.
Սերոբյան Նարեկ Արմենի, ծնվ. 2001թ.
Ամալյան Վարդան Դավիթի, ծնվ. 2001թ.
Շահրամանյան Զորիկ Վախթանգի, ծնվ. 2002թ.
Բազունց Սյակ Ռուբիկի, ծնվ. 1995թ.
Գյորգյան Կարեն Եսայիի, ծնվ. 1995թ.
Թամրազյան Արայիկ Սեյրանի, ծնվ. 1996թ.
Ալթունյան Լյոն Ռոբերտի, ծնվ. 1993թ.
Աղջոյան Սարգիս Հովհաննեսի, ծնվ. 1987թ.
Զաքարյան Արա Արշամի, ծնվ. 1990թ.
Նահապետյան Նորայր Մարտիկի, ծնվ. 1997թ.
Պռոշյան Հակոբ Ասատուրի, ծնվ. 1987թ.
Բաղդասարյան Սամվել Գյորգի, ծնվ. 1984թ.
Վարդանյան Էռնեստ Վահանի, ծնվ. 1986թ.

Հոգիներուն ի հանգիստ

Տ. եւ Տիկ. Գրիգոր եւ Արմինէ Քանար
Տիկ. Պայծառ Քանար եւ դուստրը՝
Օրդ. Նաթալի Ուլուսեան
Տ. եւ Տիկ. Հայկ եւ Նատիա Քանար
հոգեհանգստեան պաշտօն կը խնդրեն
իրենց սիրեցեալ մօր եւ մեծ մօր՝
ՎԱՐԴՈՒՀԻ ՔԱՆԱՐԻ
(VARTUHI KANAR)

Մահուան 40-ին առիթով

Տ. եւ Տիկ. Արամ եւ Սիլվա Տէր Գրիգորեան
եւ զաւակները
հոգեհանգստեան պաշտօն կը խնդրեն
իրենց սիրեցեալ ծնողաց եւ մեծ ծնողաց՝

ԿԻՐԱԿՈՍ ԵՒ ՄԱՐԻԱՄ
ՏԷՐ ԳՐԻԳՈՐԵԱՆՆԵՐՈՒ
(GIRAGOS & MARYAM
DER KRIKORIAN)

Հոգիներուն ի հանգիստ

Տիկ. Սօնիա Թըրնամեան
Պրն. Սամիր Պալի եւ ընտանիք
Տիկ. Նայլա Պալի եւ ընտանիք
հոգեհանգստեան պաշտօն կը խնդրեն
իրենց սիրեցեալ հօր, մեծ հօր եւ մօրեղբօր

ՆՈՒՊԱՐ ՊԱԼԻ
(NOUBAR BALI)

Մահուան 2-րդ տարելիցին առիթով

Ինչպէս նաեւ
Իրենց սիրեցեալ մօր, մեծ մօր եւ հարազատին

ԼԷՅԼԱ ՄՈՒԹՐԱՆ ՊԱԼԻ
(LEILA MOUTRAN BALI)

(մահացած Եգիպտոս)
Մահուան 40-ին առիթով

Ննջեցեալներու համար աղօթք

Ո՛վ բազմագութ Աստուած, կ'աղաչեմ եւ կը խնդրեմ Քեզմէ մեր ազգին բոլոր հին ու նոր, հաւատքով եւ յոյսով ի Քեզ ննջածներու համար: Մանաւանդ, Քու մօտդ ննջող իմ մարմնաւոր եւ հոգեւոր ծնողներուն, եղբայրներուն, քոյրերուն, ազգականներուն, սիրելիներուն, բարեկամներուն, բարիին մէջ կրթող հոգեւոր վարդապետներուն, ուսուցիչներուն, մեր բոլոր աշխատաւորներուն եւ երախտաւորներուն համար, որպէսզի Քու գալստեանդ մեծ օրը ողորմութեամբ յիշես եւ թողութիւն շնորհես անոնց բոլոր մեղքերուն ու սխալներուն եւ Քու աջակողմեան դասիդ սուրբերուն հետ դասես ու թոյլ տաս լսելու Քու երանաւէտ խօսքդ, թէ՝ «Եկէ՛ք իմ Հօրս օրհնածները»: Եւ, ըստ մեզի հանդէպ անոնց կատարած երախտիքներուն՝ մէկի փոխարէն բիւրապատիկ յատուցես անոնց հոգիներուն, իսկ մեզի անոնց պարտքերէն անպարտ դարձնես:
Քեզ փառք յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

Սիմէոն Կաթողիկոս



ԱՂՕԹՔ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՀԱՄԱՐ

Տէր Աստուա՛ծ, կը խնդրենք, տուր Հայոց ազգիս Քու Աստուածային խաղաղութիւնդ, առաքէ Քու Սուրբ Հոգիդ, որպէսզի ողջ ժողովուրդիս սիրտին մէջ հոսի սիրոյ եւ միաբանութեան շնորհքը: Բազումողորմ Տէր, գթա ցրուած հօտիդ եւ մի թողեր տանջուին անմիաբան հոգիով: Տէր Աստուած մեր, ամէն ժամ զօրավիգ եւ օգնական եղիր ազգիս՝ տան եւ ճանապարհին, ծովուն եւ ցամաքին մէջ, առնելու եւ տալու, վարելու եւ վաստակելու եւ յաջողեցուր բոլոր բարի գործերը:
Տէր Աստուած մեր, շնորհէ՛ նաեւ ազգիս առաջնորդներուն բարեպաշտութիւն եւ իրար հանդէպ սէր, աղքատ տնանկներուն հանդէպ գթութիւն, խնամածութեան եւ ողջ հասարակութեան հանդէպ օժանդակութիւն:
Նաեւ, Ողորմած Աստուած, հեռացուր՛ ցասումը եւ պատուհասը ողջ ազգիս եւ գաւառներուն, ինչպէս նաեւ բոլոր տուներէն եւ ողջ հայոց աշխարհէն:
Փրկէ՛ չար պատահարներէն եւ ձախորդութիւններէն, հիւանդութիւններէն, սովէն, սուրէն, տարաժամ մահէն եւ այլեւայլ վշտաբեր պատահարներէն, որոնք մեր վրան կու գան մեր մեղքերուն պատճառով:
Ցոյց տուր բոլորին, որ Դուն ես Տէրը եւ Աստուածը եւ Քեզի յուսացողներուն ի սպառ չես թողեր, որուն համար ամէն ինչի մէջ եւ բոլորին կողմէ
Քեզի փառ՛ք, պատիւ եւ երկրպագութիւն անբաժանելի եւ միասնական Սուրբ Երրորդութեանդ.
այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

PRAYER FOR THE ARMENIAN PEOPLE

Lord God, we ask you to give your Divine peace to your Armenian nation, to send Your Holy Spirit, so that the grace of love and unity may flow in the hearts of all my people. Merciful Lord have mercy on your scattered flock and do not let them be tormented by an ungodly spirit. O Lord our God, always, be strong and helpful to my nation, home and on the road, in the sea, and on land, to take and give, to manage and earn, and to succeed in all good works.
Our Lord God grants us the piety of the leaders of my nation and love for one another, mercy for the poor and needy, and support for the whole society.
Also, Merciful God, remove the wrath and plague from all my nation and provinces, as well as from all the houses and the whole Armenian world.
Save us from evil and calamities, diseases, famine, sword, untimely death, and other afflictions that befall us.
They come because of our sins.
Show everyone that you are the Lord and God and that you will not leave anyone in despair, for whom in all things, and by all, you glorify yourself, honor and worship inseparable and united in the Holy Trinity; now and forever and ever.
Amen.

ՏՕՆԵՐ

Շաբաթ, 21 Նոյեմբեր 2020

Տօն Երեքամեայ Ս. Աստուածածնի Տաճարի Ընծայման

Ս. Կոյս Մարիամին նուիրուած տօներէն է Երեքամեայ Ս. Աստուածածնի տաճարին ընծայման տօնը, որ բոլոր Քրիստոնէական եկեղեցիները կ'ոգեկոչեն նոյեմբեր 21-ին: Ըստ աւանդութեան՝ երեք տարին լրանալէ յետոյ, Տիրամօր աստուածավախ ու բարեպաշտ ծնողները՝ Յովակիմն ու Աննան, իրենց ուխտին համաձայն, Մարիամին կ'ընծայեն տաճարին, ուր ան կը մնայ մինչեւ նշանուիլը: Տօնին հաստատումը կ'առնչուի այն տաճարին հետ, որ կառուցած է Հուստինիանոս կայսրը Աստուածածնի պատուին հին հրէական տաճարին տեղը, Մորիա բլուրին վրայ: Տաճարին նաւակատիքը տեղի ունեցած է 543 թուականինՆոյեմբեր 21-ին: 638 թուականէն յետոյ, երբ Հուստինիանոսի կառուցած տաճարը կը վերածուի մուսուլմանական մզկիթի, տօնակատա-րութիւնը կը տարածուի ողջ Քրիստոնեայ աշխարհով մէկ: Աստուածածնի ընծայման տօնը Հայ Եկեղեցի մուտք գործած է ԺԸ դարուն: Երեքամեայ Ս. Աստուածածնի՝ տաճարին ընծայման օոնը Հայ Առաքելական Եկեղեցւոյ անշարժ տօներէն է:

Երկուշաբթի, Նոյեմբերի 23, 2020թ.

Ս. Յուլիանէ եւ Վասիլուհի Կոյսերու Յիշատակութեան Օր

Յուլիանէ եւ Վասիլուհի անունով շատ կոյսեր կան Տօնացոյցներուն մէջ: Բայց հայկական Տօնացոյցին մէջ յիշատակ-ուողները Նիկոմիդիա քաղաքէն են:

Ս. Յուլիանէն (†304) մանուկ հասակէն ինքզինք նուիրած է կուսական կեանքին: Դիոկղետիանոս կայսրի հալածանքներու օրերուն կը մերժէ հեթանոս երիտասարդի մը ամուսնութեան առաջարկը եւ կը տարուի դատարան: Երբ բազմաթիւ չարչարանքներէն եւ փորձութիւններէն յետոյ սուրբին կը հանեն այրելու, խարոյկը ինքն իրեն կը մարի: Այս առիթ կը դառնայ բազմաթիւ ներկաներու դարձին, որոնք տեղւոյն վրայ կը նահատակուին: Իսկ Ս. Յուլիանէին կը գլխատեն, 19 տարեկանին:

Հայ Առաքելական Եկեղեցին Ս. Յուլիանէ եւ Վասիլուհի կոյսերուն յիշատակը կը տօնէ Ա. Յիսնակի Կիրակիին յաջորդող Երկուշաբթի օրը:

Ս. Վասիլուհին եւս († 303), որ իննամեայ աղջնակ էր, Դիոկղետ-իանոս կայսրի հալածանքներու օրերուն կը մատնուի տանջանք-ներու, սակայն անվնաս դուրս կու գայ փորձութիւններերէն առիթ

դառնալով իր դատաւորին դարձին: Ան մահացած է 309 թուականին:

HOLIDAYS

Saturday, November 21, 2020

Presentation of Three-Year-Old St. Mary to the Church

One of the feasts dedicated to the Holy Virgin is the presentation of three-year-old Mary (Holy Mother of God) to the temple. All Christian Churches celebrate this feast of November 21. According to the Holy Tradition of the Church, after Mary's becoming three-year-old, the parents of the Holy Virgin, Jehoiakim and Anna, fulfilling their promise, bring Mary to the Temple and present her to God. Mary remains in the Church till her engagement. Establishment of the feast is related to the Cathedral, which was built by the King Justinianos in honor of St. Mary, the Holy Mother of God, in the place of the old Jewish temple, on the hill Moria. The cathedral had been consecrated on November 21, 543 AD. After 638 AD, when the Cathedral, built by the King Justinianos, is converted into a Moslem temple, the celebration of the feast spreads throughout the entire Christian world. The Feast of presentation of St. Mary to the Church has been included in the Armenian Apostolic Church Calendar in the nineteenth century.

Monday, November 23, 2020

Commemoration of Sts. Juliane and Vasilouhie

In Church calendars there are many virgins named Juliane and Vasilouhie. However, the virgins commemorated according to the Armenian Church Calendar, are from the town Nikomedia. St. Juliane (Juliana) had made the vow of celibacy since childhood. During the period of Christians' persecutions by the King Dioklethianos she refuses to marry a young heathen man and because of it is taken to the court. When after many torments and trials the saint is taken to be burnt, the fire goes out. St. Juliane is beheaded at the age of 19, in 304 AD. St. Vasilouhie (Basilla) was a nine-year-old girl. She is subjected to torments during the period of Christians' persecutions by the King Dioklethianos. However, she survives all torments and trials and remains unharmed, and the judge, witnessing this, is converted the Christianity. She passes away in 309 AD.

ՔԱՀԱՆԱՆԵՐՈՒ ՈՒՂԻՈՎ

Միշտ կ'ըլլան քահանաներ, որ անմիջապէս հասարակութեան ուշադրութեան կեդրոնին մէջ կը յայտնուին, երբ իյնան: Ոմանք կ'ըսեն, որ շուտով Եկեղեցին իր հօտը կը կորսնցնէ այդ պատճառով: Կ'ուզեմ հանգստացնել ձեզ: Եթէ մարդիկ քահանայի բարեպաշտութեան համար եկեղեցի կ'երթան, ապա շատ շուտով կը հեռանան: Որովհետեւ Քրիստոսի՛ համար պէտք է եկեղեցի երթալ, ապաշխարութեա՛ն, հաղորդութեա՛ն, օրհնութեա՛ն համար, այլ ոչ թէ իտէալական քահանաներու, որպիսիք բնութեան մէջ գոյութիւն չունին որպէս տեսակ, ինչպէս որ՝ հեքեաթային արքայազն ձիու վրայ: Այդ պատճառով ալ՝ ո՛չ: Իրական հաւատացեալներու թիւը չի պակսիր: Կռապաշտները՝ այո՛, կը պակսին, բայց չեմ կարծեր, որ այդ վատ է: Իսկ եկեղեցին հիւանդանոց է, մենք բոլորս հիւանդ ենք մեղքով եւ կը բուժուինք այնտեղ: Հիւանդանոց է, այլ ոչ թէ կենդանի ցուցանմուշներով սրբութեան նուաճումներու ցուցահանդէս...

Քահանան հրաշալիօրէն գիտէ, թէ ինքը ով պիտի ըլլայ, այնպէս, ինչպէս համայնքի անդամները: Ոչ մէկ նոր բացայայտում չէք ըրած մեզի համար: Ի միջի այլոց, թէ ով պէտք է ըլլայ իւրաքանչիւր քրիստոնեան՝ ան նոյնպէս պէտք է իմանայ, իսկ ահա այստեղ յաճախ դժուարութիւններ կը յառաջացնեն ըմբռնողութեան հետ: Այդ մարդոց մեծ մասը, որ քահանաներու մասին ընկերային ցանցերու մէջ պտտուող բամբասանքներու փորձ ունի, ոչ թէ քրիստոնեաներ չեն, այլ ընդհանրապէս ոչ մէկ կապ չունին Եկեղեցւոյ հետ, եւ անոնց փնթփնթալու նպատակը իրենց արդարացնելն է, որ եկեղեցի չեն երթար, որովհետեւ այնտեղ ահա՛ այդպիսի վատ տէրտէրներ կան: Իսկ քրիստոնեան նման բաներով չզբաղուիր: Եթէ մարդը ճշմարիտ քրիստոնեայ է, ապա գիտէ՞ք, թէ իրեն ինչպէս կը զգայ: Ինչպէս մէկ ձեռքով անդունդի վրայ կախուած մէկը: Եւ անոր համար բացարձակապէս միեւնոյն է, թէ ով իրեն ձեռք կը մեկնէ ու դուրս կը հանէ այնտեղէն, ան իրեն ձեռք մեկնողի մեղքերուն հեռազգաց ու էական հետազօտութեամբ չզբաղուիր, գնահատողական խօսք ու զրոյցի եւ իրեն փրկողի հոգեբանական նկարագրին մէջ չի մտներ: Ընդհանրապէս, իւրաքանչիւր կարգին մարդ նման իրավիճակի մէջ ուղղակի շնորհակալ կ'ըլլար, բայց մեր հոգեբանութիւնն է այդպիսին՝ բարերարներու ձեռքերը կծել...

Ալեքսէյ քհնյ. Եսիպով
Ռուսերէնէն թարգմանեց՝
Էմիլիա Ապիցարյանը

ԿԱՐԵՒՈՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Ս. ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ, ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Արդեօք Գիտէի՞ք թէ.-

Ինչո՞ւ անհրաժեշտ է Ս. Մկրտութիւնը:

Այո՛, որովհետեւ առանց Ս. Մկրտութեան, մարդ չկրնար փրկուիլ: Յիսուս Ինքը մկրտուեցաւ Յորդանան գետին մէջ Ս. Յովհաննէս Մկրտիչի ձեռքով: ընդգծելով անոր կարեւորութիւնը եւ Իր երկրային առաքելութեան վերջին առաքեալներուն պատուիրեց բոլորին մկրտուիլ Ս. Երրորդութեան՝ Հօր, Որդւոյն եւ Ս. Հոգիին անունով: Պէտք միշտ յիշել մարդ կրնայ ըլլալ շնորհալի, բարի, առաքինի, բարեպաշտ, բայց միայն Ս. Մկրտութեամբ կրնայ դառնալ քրիստոնեայ եւ Եկեղեցւոյ անդամ: Հետեւաբար այս խորհուրդը մարդու փրկութեան ճանապարհին սկիզբն է: Դառնալով քրիստոնեայ՝ մարդ պէտք է մէկ կողմ դնէ հին ընթացքը եւ այլեւս իր կեանքը իմաստաւորէ Տիրոջմով եւ աւետարանական պատգամներով:

Ս. Գիրքի մի քանի հատուածներուն մէջ կը խօսուի «Յիսուս Քրիստոսի անունով» Մկրտութեան մասին, ինչպէ՞ս հասկնալ անոնք:

Իսկապէս, Գործք Առաքելոցի 2.38, 8.16, 10.49, 19.5 եւ 22.16 համարներուն մէջ կը խօսուի «Յիսուս Քրիստոսի անունով» Մկրտութեան մասին: Եկեղեցւոյ հայրերուն կարծիքով՝ այս արտայայտութիւնը ամենեւին չի մերժեր Ս. Երրորդութեան անունով մկրտելու Յիսուսի պատուէրը, այլ անով յստակօրէն զանազանութիւն կը դրուի Յովհաննէսի մկրտութեան եւ Յիսուսի անուամբ կատարուած Մկրտութիւններուն միջեւ: Ալեքսանդրիայի պատրիարք Եւրոգիոսը (Զ-Է դդ.) կ'ըսէ, **«Յիսուս Քրիստոսով մկրտուիլ կը նշաշկէ մկրտուիլ Յիսուս Քրիստոսի պատուիրանով եւ աւանդութեամբ, այսինքն՝ Հայրով, Որդիով եւ Ս. Հոգիով»:** Իսկ Ս. Բարսեղ Կեսարացին «Ս. Հոգիին մասին» աշխատութեան 12-րդ գլխուն մէջ կ'ըսէ. **«Ոեւէ մէկուն չշփոթեցնէ այն, որ առաքեալը, յիշատակելով մկրտութեան մասին, յաճախ կը լռէ Հօր եւ Ս. Հոգիին անուան մասին, եւ ոչ ոք պէտք չէ եզրակացնէ, որ անուններ տալը պէտք չէ պահել: Ըսուած է. «Դուք բոլորդ, որ ի Քրիստոս մկրտուեցաք, Քրիստոսով զգեստաւորուեցէք» (Գաղ. 3.27), եւ նաեւ՝ «Մենք բոլորս, որ մկրտուեցանք»(Հմմտ. Հռոմ 6.3): Այդ այն պատճառով է, որ Քրիստոսի անունը տալը ամէն ինչի խոստովանութիւնն է, այդ կը մատնանշէ թէ՛ օծող Աստուծոյ, թէ՛ օծուող Որդիին եւ թէ՛՛ Հոգիին օծութիւնը, ինչպէս կը սորվեցնէ մեզի Ս. Պետրոսը (Գործք. 10.38)»:**

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՕՆԱՑՈՅՑ
ՅԱՌԱՋԻԿԱՅ ՇԱԲԹՈՒԱՆ
Feast de l’église pour la semaine prochaine
Նոյեմբեր – Novembre
2020

23, Երկուշաբթի - Տօն Սրբոցն կուսանացն
Յուլիանեայ եւ Վասիլուհւոյ:

Lundi 23 – Fête des Stes vierges Julianna et Basiléa.

24, Երեքշաբթի – Տօն Սրբոցն Ղուկիանոսի քահանային,
Տարագրոսի, Պրոպոսի, Անդրոնիկոսի:
Ոնեսիմեայ եւ այլոց աշակերտացն սրբոյն Պօղոսի:
Mardi 24 - Fête du Saint prêtre Lucien, de Darakros,
Probos, Andronicos, Onésime et les autres disciples de Saint Paul.

25, Չորեքշաբթի – Պահք:
Mercredi 25 - Jeûne.

26, Հինգշաբթի – Տօն Սրբոցն Առաքելոցն
եւ առաջին Բագարատայ Տոռոմենոյ եպիսկոպոսին:
Jeudi 26 – Fête du Saint patriarche Clément
et de l’évêque Bagrad de Doromàne.

27, Ուրբաթ - Պահք:
Vendredi 27 - Jeûne.

28, Շաբաթ – Տօն սրբոց առաքելոցն եւ առաջին լուսաւորչացն
մերոց՝ Թադէոսի եւ Բարդուղիմէոսի:
Samedi 28 – Fête de nos Sts Apôtres et premiers illuminateurs,
Thaddée et Barthélémy.

Հայկական Խոհանոց / Armenian Kitchen

Can be served as a main dinner dish, but it would also work as a side or maybe a light lunch. It can be served cold and warm.

Nivik

The Complete Middle East Cookbook

1 1/2cups dried chickpeas (garbanzo beans) OR 3-4 15oz cans cooked
water
1 large onion, chopped
1/4cup olive oil
1/4 cup tomato paste
salt
black pepper
1tsp sugar
750g (1 1/2lb) spinach, roughly chopped (stems removed)

1. If using dried peas, wash well and soak in 4 1/2 cups cold water overnight, preferably in a cool place. Next day simmer peas (in soaking water) for two hours or until tender. Otherwise, pour cooked peas with about 1/2 cup of their liquid into a large saucepan and heat on low.

2. In a separate pan gently fry onion in oil until transparent. Add tomato paste, about 2 teaspoons salt, a generous grinding of black pepper and the sugar. Add mixture to cooked chickpeas.

3. Add spinach and simmer for 20-30 minutes, until spinach is wilted and tender. Add additional water only if necessary. Nivik should be moist, but not liquidy.

4. Season with salt and pepper to taste; enjoy!

Շաբթուայ խորհրդածութիւններ

Առանց լոյսի ամէն ինչ մռայլ է: Այդպէս ալ առանց խոնարհութեան մարդու մէջ ոչինչ չկայ, այլ միայն պարզապէս խաւար: Խոնարհութիւնը կրնայ ամբողջ աշխարհը գրաւել:

Ս. Սերաֆիմ Սարովցի

Without light, everything is gloomy. There is nothing in a person without humility, but just darkness. Humility can conquer the whole world.

St. Seraphim Sarovtsi

Հաւատացեալը չի վախնար խոչընդոտներէն, ոչ ալ կ'ըսէ, որ որեւէ բան անհնար է: Խոնարհ մարդը իր որոնումը կը կեդրոնացէ մասնաւորապէս իր սխալներուն վրայ եւ եթէ մեղք կը տեսնէ, ան բացի իրմէ ոեւէ մէկուն չի մեղադրեր:

Շենուդա Գ հայրապետ

A believer is not afraid of obstacles, nor says anything is impossible. A humble man focuses on his search specifically on his mistakes and if he sees sin, he doesn't blame anyone except himself.

Shenuda G father

Անհնար է ինքզինքնիս արդարացնել եւ ըսել, որ եթէ աւելի լաւ ժամանակ ըլլայ, մենք աւելի յաջողակ կ'ըլլանք: Եւ լաւագոյն ժամանակներուն կրնանք կորսնցնել, թէ՛ արժանապատուութիւնը, թէ՛ հոգին եւ ամենավատ ժամանակներուն ու ամենադժուար պայմաններուն կրնանք պահպանել, թէ՛ արժանապատուութիւնը, թէ՛ հոգին: Աստուած մեզի կը տեսնէ, կը կարդայ մեր միտքերը, մենք չենք կրնար
Անոր առջեւէն թաքնուիլ:

Պավել պատրիարք
(Սերբ ուղղափառ եկեղեցի)

It's impossible to justify ourselves and tell ourselves that if there is a better time, we will be more successful. And in the best times, we can lose dignity, soul, worst times and worst conditions, we can preserve both dignity and dignity or ' the soul. God sees us, reads our thoughts,
we cannot hide from Him.

Pavel Patriarchate
(Serbian Orthodox Church)

ՄԱՍՆԱԿՑԻՆՔ ՀԱՅՈՑ ՔԱՋԱՄԱՐՏԻԿՆԵՐՈՒՆ
ՅԱՆՈՒՆ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԵՒ ԱՐՑԱԽԻ
ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ

Մայր Հայրենիքի եւ ի մասնաւորի Արցախի
դիմագրաւած դժնդակ իրավիճակներուն, համեստօրէն կը խնդրենք
մեր սիրալիր հաւատացեալներէն, որպէս սփիւռքահայեր բերել մեր
հնարաւորութիւններն ու ջանքերը մէկտեղելու վասն
մեր Մայր Հայրենիքի եւ Արցախի փրկութեան եւ ազատագրութեան:

Ձեր մասնակցութեան համար

Կարելի է հեռաձայնել Եկեղեցւոյ գրասենեակ եւ
կամ՝ հետեւեալ
անմիջական թիւերէն մէկուն՝

Եկեղեցւոյ գրասենեակ (514) 279-3066
Պատասխանատու անձերուն՝
(514) 865-3911, (514)825-5612 եւ (514)792-2866:

Կարելի է այցելել նաեւ՝ Եկեղեցւոյ կայքէջը

Website: Saintgregory.ca կամ armenianchurch.ca –
Artzakh Humanitarian Fund

Faire un don

Նուիրատուութեան դիմաց – ստանալ տուրքէ զերծ ստացագիր:

Իրաքանչիւր Հայորդի իր մասնակցութեամբ կ'արտայայտէ իր ազգային
գիտակցութիւնն ու հայրենասիրական պարտաւորութիւնը
ի գին հայրենի հողին փրկութեան:

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 - Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008

stgregorychurch@gmail.com Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

ՍՐՏԱԲՈՒԽ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ
Ի ՆՊԱՍՏ
ՄԵՐ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՊԱՅԾԱՌՈՒԹԵԱՆ

Գիտակցելով այս օրերու դժուարութեան, համեստօրէն կը խնդրենք մեր սիրալիր հաւատացեալներէն, կատարել իրենց սրտաբուխ նուիրատուութիւնները այցելելով Եկեղեցւոյ կայքէջը Website - Saintgregory.ca

Faire un don

Շնորհակալութիւն

YOUR HEARTFELT DONATIONS
FOR THE SUPPORT OF OUR CHURCH:

Concerning the difficulties that we are facing to those days; we humbly ask our parishioners to remember St. Gregory the Illuminator Armenian Cathedral for the glory of our Church.
Your donations can also be made through:
Church website – saintgregory.ca by:

Faire un don

Thank You!

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Don à l'Église

Donation for the Church

Saint Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal, QC
Donations of November have been received
with great appreciation 2020

CHURCH:
Mr. Savars Gurarslan $100
Anonymous $75

ARTZAKH HUMANITARIAN FUND:
Dr. Yves Semerjian $1000
Miss Sona Karaoghlanian $100
Mrs. Hasmig Khatchikian $50
Miss Yepraksi Saglam $30

HOKEHANKISD:
THE LATE GIRAGOS & MARYAM DER KRIKORIAN:
Mr. & Mrs. Aram & Silva Der Krikorian $40

THE LATE VARTUHI KANAR:
Mr. & Mrs. Krikor & Armine Kanar $200
Mrs. Bayzar Kanar & Natalie Oulousian $100

THE LATE NOUBAR BALI & LEILA MOUTRAN:
Mrs. Sona Ternamian $200

Աստուծոյ Տաճարը վսեմագոյն ընծայարան է,
ուր կ'ամփոփուին հաւատավոր ու նուիրեալ հոգիները
Աստուածամօր բարեխօսութեան հովանիին տակ:

The Temple of God is the supreme altar,
where the faithful and devoted souls
are gathered under the auspices
of the intercession of the Mother of God.

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian Cathedral

ՀՈԳԵՒՈՐ ՊԱՏԳԱՄ ԵՒ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Ուղիղ Հեռարձակում – Live

Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Ամէն Չորեքշաբթի
1 Հոկտեմբեր 2020 սկսեալ երեկոյեան ժամը 5:00-ին:
Արժ. Տ. Դաւիթ Քհնյ. Մարգարեանի հետ:

MESSAGE SPIRITUELLE ET SERVICE DU SOIR

avec le R.P. David Margaryan
Chaque Mercredi
à partir du 1er Octobtre 2020 à 17h00.

Կը հրաւիրենք մեր սիրելի հաւատացեալները մասնակից ըլլալու Աստուածաշնչական նիւթերուն առցանց Եկեղեցւոյ դիմատետրի էջով:

Nous invitons nos chers fidèles à participer à ces séances d'interprétations bibliques via la page Facebook de l'Église.

Հաճելի հոգեւոր պահեր կը մաղթենք մեր հետեւորդ հաւատացեալներուն:

Nous souhaitons a nos fidèles des moments spirituels agréables.

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/
stgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

ԱՄԵՆԱՄՍԵԱՅ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Ուղիղ հեռարձակում – En direct

Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Շաբաթ, 28 Նոյեմբեր 2020

ժամերգութիւն - երեկոյեան ժամը՝ 5-ին:

«Ուստի կը յայտարարեմ ձեզի. "Ի՞նչ որ կը խնդրէք աղօթքով, հաւատացէ՛ք թէ պիտի ստանաք, ու պիտի ըլլայ ձեզի" (Ղուկ. 11:24):

Samedi, le 28 Novembre 2020

Office du soir à 17h00.

"C'est pourquoi je vous dis : tout ce que vous demanderez en priant, croyez que vous le recevrez, et il vous sera fait" (Marc 11 :24).

ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Այս յայտարարութեամբ կը փափաքինք մեր հաւատացեալներուն ուշադրութեան յանձնել թէ՝ Յուղարկաւորութեան կարգի ծրագրաւորման պարագային, նախքան որեւէ այլ գործընթացի ձեռնարկելը, համեստօրէն կը խնդրուի առաջին հերթին հեռաձայնել Եկեղեցւոյ գրասենեակ եւ ժամադրուիլ հոգեւոր հովիւին հետ խորհրդակցութեան համար, որպէսզի ճշգրտօրէն կատարուին այն նախաձեռնութիւնները, որոնք պիտի կիրարկուին ըստ հանգուցեալի ընտանեկան պարագաներու յարմարութեան իրավիճակին:

Անգամ մը եւս կը փափաքինք շեշտել, Եկեղեցւոյ ծառայութեան մատուցման կարեւորութիւնն ու առաջնահերթութիւնը, որպէսզի կարենանք պատշաճօրէն կիրարկել մեր եկեղեցապատկան ծառայութիւնը, զերծ մնալով որեւէ թիւրիմացութենէ եւ անպատեհ շարժառիթէ, օրինակ՝ դիակիզումի պարագային, յուղարկաւորութեան կարգը կը մատուցուի նախքան հրկիզումը, այլապէս, հրկիզուած մոխիրին վրայ արտօնուած չէ յուղարկաւորութեան կարգ կատարել որեւէ մէկ ձեւով, ըստ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ ծիսակատարութեան կանոններուն:

Հետեւաբար, մեր յորդորն է անմիջապէս կապ հաստատել Եկեղեցւոյ գրասենեակին հետ, հեռաձայնելով՝ (514) 279-3066 թիւին, կազմակերպելու յուղարկաւորութեան կարգին հետ առնչուող հարկ եղած կարգաւորումները:

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳՐԱՍԵՆԵԱԿ

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Մեր հաւատացեալներուն կը յայտնենք, թէ համաձայն Քէպէք նահանգի առողջապահութեան նախարարին՝ Մոնթրէալի շրջանը վտանգուած է թագաժահրի Covid-19 կարմիր գօտիի զգուշացման հանգրուանով, որուն որպէս հետեւանք խմբային հաւաքականութեան թողարկման թիւը՝ կրճատուած է հասնելով 25 հոգիի, եւ պարտադրուելով ձեռք առնել առողջապահութեան բոլոր քայլերն ու միջոցները:

Նկատի առնելով համաճարակի ներկայ ընթացքը առժամաբար կը դադրեցնենք «Վաչէ Յովսէփեան» սրահին մէջ, կատարուող բոլոր տեսակի հիւրասիրութիւններն ու հաւաքները մինչեւ նոր տնօրինութիւն:

Ձեզ կը մաղթենք առողջութիւն եւ ամենայն բարիք եւ յոյս կը յայտնենք, որ յառաջիկայի փոփոխութիւններու եւ այլ մանրամասնութիւններու պարագային գրաւոր ձեզ տեղեակ պահել:

Ձերծ մնալ եկեղեցի յաճախելէ նկատի ունենալով հետեւեալ պարագաները.

1. Բոլոր այն անձինք, որոնք հիւանդանալու բարձր հակամետութիւն ունին:
2. Ձեր անմիջական շրջանակին կամ ընտանիքին մէջ ոեւէ մէկը վարակուած է Թագաժահր Covid-19-ով եւ կամ ունին հետեւեալ ախտանշանները՝
   - Ջերմութիւն
   - Հազ
   - Կոկորդի ցաւ
   - Հոտարութեան կամ համի զգալի պակաս

   եւ կամ կատարած են Քէպէք նահանգէն դուրս ճամբորդութիւն:

Ձեզ կը մաղթենք առողջութիւն եւ ամենայն բարիք եւ յոյս կը յայտնենք, որ յառաջիկայի փոփոխութիւններու եւ այլ մանրամասնութիւններու պարագային գրաւոր ձեզ տեղեակ պահել:

Կարելի է նաեւ առցանց նուիրատուութիւններ կատարել այցելելով Եկեղեցւոյ կայքէջը՝ saintgregory.ca

Faire un don

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳՐԱՍԵՆԵԱԿ

AVERTISSEMENT

Nous informons nos fidèles que selon le Ministre de la Santé et le Directeur de la Santé publique, la région de Montréal se trouve en zone rouge de la pandémie coronavirus Covid-19. Par conséquence le nombre de fidèles assistant aux offices religieux est limité à 25 personnes. Compte tenu de l'évolution actuelle de la pandémie, nous suspendons temporairement tous types de réceptions et rassemblements dans la salle « Vatché Hovsepian ».

Nous vous souhaitons santé, bien-être et espérons vous tenir informé de tout changement futur ou d'autres détails.

S'abstenir d'aller à l'église

1- Tous ceux qui ont un risque élevé de tomber malade.
2- Si quelqu'un dans votre environnement immédiat ou un membre de votre famille est actuellement infecté par le covid-19 et/ou présente les symptômes suivants :

- Fièvre
- Toux
- Mal de gorge
- Perte de l'odorat ou du goût
  ou a voyagé en dehors du Province de Québec

Vous pouvez également faire des dons en ligne
en visitant le site web de l'église saintgregory.ca

Faire un don

BUREAU DE L'ÉGLISE

ԵԿԷ՛Ք ՊԱՅԾԱՌԱՅՆԵՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

Եկեղեցոյս պայծառութեան եւ առաքելութեան յարատեւման նախանձախնդիր մեր սիրելի հաւատացեալներ,

Սիրով կը յայտնենք, թէ մեր եկեղեցին կարիքն ունի հետեւեալ իրերուն.-

- Օդորակիչի անհրաժեշտ սարքաւորման (Air Conditioner)
- Ս. Սեղանի ոսկեգոյն ասեղնագործ ծածկոց
- Հոգեւորականաց հողաթափեր
- Սկիհի ծածկոցներ եւ Աւետարանի բռնիչ
- Շուրջառներ
- Մեծ Պահքի կամ Աւագ շաբթուան յարդարանք (սեղան եւ ծածկոց)
- Յիսուս Մանկան մսուր
- Եկեղեցւոյ տօնածառ
- Ճրագալոյցի եւ Տեառընդառաջի համար նախատեսուած դուրսի մոմեր
- Ջրօրհնէքի Սափոր
- Ս. Խորանի 2 մեծ վարագոյր կարմիր եւ սեւ

Արդ, անոնք որոնք կը փափաքին իրենց սրտաբուխ նուիրատուութեամբ մասնակից դառնալ եկեղեցւոյ սուրբ առաքելութեան, հաճին կապ պահել եկեղեցւոյ հովիւին կամ քարտուղարութեան հետ (514) 279- 3066:

«Այս երկրի մէջ ցանէ՛ քու հացդ, որպէսզի երկնքի մէջ զայն հարիւրով պտուղ տուած գտնես»:

«Հոգեւոր հայելի»

Կանխայայտ շնորհակալութեամբ,

Հոգեւոր Հովիւ եւ Ծխական Խորհուրդ